

Ֆէնէրցիներու օրով տուժեցին մանաւանդ հայերը, որոնք աչքի փուշ էին յոյն վաճառականներուն: Ոչ միայն յոյն կղերը զղուելի առասպելներ տարածած էր ժողովուրդին մէջ հայ դաւանանքին մասին, ինչ որ պիտի տեսնենք ուրիշ գլուխի մը մէջ, այլ նաեւ յոյն առեւտրականները չէին հանդուրժեր հայոց մրցումին: Այս միջոցներուն մէջ՝ Ֆէնէրցի իշխանները սկսան նեղել հայ տարրը, մանաւանդ վաճառական դասը:

Այս հալածանքներուն հետեւանքը այն եղաւ որ 1785 թուականին հայերուն արգելեցին հող գնելը:

Մեծագոյն հարուածն էր աս հայերուն համար, որովհետեւ հայ վաճառականներուն առեւտուրի գլխաւոր նիւթն էր արջառը, զոր կը բուծանէին Մուսուլայի իրենց հողերուն վերայ, եւ յետոյ կ'արտածէին արտասահման:

Հայերուն դէմ դրուեցան նաեւ ուրիշ կարգ մը սեղմումներ: Օրինակի համար հայերուն արգելուեցաւ դեղագործ, մուշտակագործ, հացագործ եւ մսագործ դառնալ:

Հայ վաճառականները, այս միջոցներուն մէկ կարենալ չնչելու համար, դտան աւելի դիւրին ճամբայ մը, կաշառքը: Անոր չնորհիւ էր որ կրնային իշխաններէն կորզել օրէնքով արգելուած շատ մը իրաւունքներ:

ՊԱՅԲԱՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Անհանդուրժելի դարձաւ կեանքը աւելի քան կէս դար:

Հայերը, զրկուած հող գնելու իրաւունքէն, ենթակայ կրօնական անհանդուրժողութեան, եւ տեղացիներու ատելութեան նշաւակ, 1785-էն մինչեւ ժ.թ. դարու կէսերը՝ ապրեցան տառապանքի օրեր:

Այս ճնշուած դրութիւնը տեւեց մինչեւ 1840-ական թուականները, երբ աշխարհի մէջ սկսած էր նոր շունչ մը փչել, ու բոլոր ճնշուած ժողովուրդներուն մօտալուտ ազատագրութեան մը յոյսը տալ:

Ռուսմանիան ալ վարակեց այդ յեղափոխական մտայնութիւնը՝ ուսմէն ժողովուրդին համար հռչակելով քաղաքական ազատագրութեան մօտեցող արշալոյսը, եւ փոքր ժողովուրդներուն ներշնչելով յոյսը թէ ուշ չէ

մարդկային իրաւունքներու ստացման ժամը:

Բայց առանց պայքարի չէր որ հայերը տէր դարձան իրենց կորուսած իրաւունքներուն:

Եւ այդ պայքարին հնոցը, ու անոր ալ կը պատկանի պատիւը վերջնական յաղթանակին:

Անշուշտ տեղն է յիշել որ Մուսթէնիոյ կամ Վալաքիոյ հայերը, Պուքէշն ալ մէջը, չէին կրնար այն դերը խաղալ ինչ որ Մուսուլայի հայութիւնը որ դարաւոր անցեալ ունէր հոն: Եւ անշուշտ եաշին էր որ պիտի վիճակէր մեծագոյն դերը՝ որովհետեւ տեղւոյն հայութիւնը տեսակ մը հայ կեդրոնական իշխանութեան հանգամանք ունէր, իբր մայրաքաղաքի բնակի:

Եաշի կեդր. Հոգաբարձութեան 1863 Մարտ 10 թուակիր արձանագրութենէն կը քաղենք քանի մը պատմական նօթեր, որ լոյս կը սփռէ հայոց ձեռնարկած պայքարին մասին.

«1856-ին, երբ Փարիզի դաշնագրին հետեւանքով՝ Եւրոպական Ֆանճաթողով մը Ռումանիա եկաւ, լսելու համար ժողովուրդներու բողոքները Մուսուլայի եւ Վալաքիոյ իշխանապետութեանց կազմակերպութեան մասին, Մուսուլայի հայ հասարակութեան կեդրոնական Հոգաբարձութիւնը, իբրեւ օրինական օժկանը իշխանապետութեան ամբողջ հայ համայնքին, թոյլ վիճակի մը մէջ գտնուէր՝ յանուն բովանդակ հայ համայնքին պահանջելու համար կառավարութենէն իր վիճակին բարուրդումը, արժեցնելու համար իր վարկը, եւ վերոտանալու համար քաղաքային եւ քաղաքական իրաւունքները՝ որոնցմէ զրկուած էր ատենէ մը ի վեր: Նահանգային հոգաբարձութիւնները, կեդրոնական հոգաբարձութեան վարկը բարձրացնելու բողոքներով՝ որպէսզի կարենայ իրաւորեւ անիկա իր իրաւասութիւնները, իրենց կողմէ լիազօրներ կարգեցին պաշտօն տալով անոնց գալ մայրաքաղաք (Եաշ) եւ այնտեղի համայնքին հետ համախորհուրդ քննել կեդրոնական հոգաբարձութեան թուլութեան պատճառները, եւ եթէ ան ի վիճակի չդառնար՝ այն ատեն մասնաւոր Յանձնարկումը մը կարգել, որ ստանձնէր կատարել, յանուն հայ համայնքին, անհրաժեշտ աշխատանքները: